

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Անասնապահության զարգացում Հայաստանի հարավում» ծրագիրն առաջարկում է Սյունիքի և Վայոց ձորի մարզերի Մերս, Կարմրաշեն, Արտավան, Արին, Ելփին, Խաչիկ, Վերնաշեն, Գնիշիկ, Թասիկ, Աշոտավան, Քարաշեն, Կոռնիձոր, Ներքին Խնձորեսկ և Բարձրավան բնակավայրերի կին ֆերմերներին մասնակցել «Անասնակերի արտադրության արդյունավետ փորձը թիրախային համայնքներում» ենթածրագրին, որի նպատակն է նպաստել անասնապահության ոլորտում ֆերմերների գիտելիքների ու հմտությունների զարգացմանը և առաջարկել ֆերմերային տնտեսության համար անասնապահության վարման այնպիսի արդի լուծումներ, որոնց կիրառումը կնպաստի կենդանիների մթերատվության բարձրացմանը՝ որակյալ կերային մշակաբույսերի արտադրության շնորհիվ:

Ծրագրի ընթացքում ֆերմերները կստանան անհատական խորհրդատվություն անասնապահության ոլորտում արդյունավետ տարբերակով կերային կուլտուրաների մշակության վերաբերյալ՝ մասնավորապես գարու մաքուր մշակությունը կամ գարու մշակությունը այլ կերային մշակաբույսի ենթացանքով:

ԳՐԱՆՑՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՐՈՂ ԵՔ ԴԻՄԵԼ

«Ռազմավարական Զարգացման Գործակալություն» Միսիանի մասնաճյուղ
Կոնտակտային անձ՝ Լուսինե Սարաջյան

Հեռ 077 33 55 84

Գրասենյակի աշխատաժամերն են՝ 09:00 – 18:00

Ընդմիջում՝ 13.00-14.00

Գրանցման վերջնաժամկետն է Հուլիսի 23

Ծրագրին ընտրության չափորոշիչները և մասնակցության պայմանները.

«Ֆերմերների կարողությունների ու հմտությունների զարգացում» բաղադրիչի շրջանակներում «Անասնակերի արտադրության արդյունավետ փորձը թիրախային համայնքներում» ենթածրագրի թիրախ համարվում են այն **կին Ֆերմերները**, ովքեր.

- Ունեն բավարար **հողային ռեսուրսներ** և **պայմաններ** (ագրոտեխնիկայի ապահովման համար համապատասխան տեխնիկայի հասանելիություն և պարարտանյութերի առկայություն) կերային մշակաբույսերի մշակության համար
- զբաղվում են անասնապահությամբ և ունեն 2 և ավել կթու կով,
- բարեխիղճորեն կիրականացնեն տրամադրած անհատական խորհրդատվությունները և կպահպանեն ճիշտ **ագրոտեխնիկան**
- կիրականացնեն համատեղ ներդրում, ընդ որում, ծրագրի ներդրումը կլինի **գարու սերմացուի** տեսքով, ֆերմերի ներդրումը՝ ցանքի համար նախատեսված մշակության բոլոր աշխատանքների տեսքով և պարարտանյութերի:
- պատրաստակամորեն կկիրառեն նոր տեխնոլոգիաներ ու կերակրման նոր մեթոդներ՝ բարելավելու տնտեսությունում արտադրվող կերային բազան և բարձրացնելու խոշոր եղջերավոր կենդանիների մթերատվությունը

Ծրագրի շրջանակներում նախապատվություն կտրվի այն ֆերմերային տնտեսություններին, որոնք ցանք կիրականացնեն աշնան վարի վրա (ցրտահերկ):

- **Մեկ համայնքում փորձնական ցանքի** (կորնզանի մշակություն գարու ենթացանքով կամ գարու մշակություն) **նվազագույն և առավելագույն ծավալը մեկ ֆերմերի համար սահմանվում է 1-2հա:**
- **Մեկ համայնքում փորձնական ցանքի նվազագույն և առավելագույն ծավալը սահմանվում է 2–10հա:**